

ԿԱՐԵՒՈՐ ՄՏԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ

Հրաչ Զիլինկիրեան կը մեկնաբանէ Մերձաւոր Արեւելքի քրիստոնէութեան առջեւ ծառայած երկու հիմնական խնդիրները՝ անվտանգութիւն եւ գաղթականութիւն:



ԱՆՈՒՇ ԹՐՈՒՄՏ

«Աւերորա երկխօսութիւններ-2017» նախագծի ծիրէն ներս՝ «Պատերազմները, կրօնական ծայրայեղութիւնները եւ ապագային սպասուող մարտահրաւէրները Մերձաւոր Արեւելքի մէջ Արեւելեան Քրիստոնէութեան համար» թեմայով, վերջերս, Երեւանի Պետական համալսարանին մէջ դասախօսութիւն ունեցաւ ծանօթ գիտնական, Օքսֆորտ համալսարանի դասախօս՝ Հրաչ Զիլինկիրեան:

Տ. քթ. Հրաչ Զիլինկիրեան խօսեցաւ այն կարեւոր մարտահրաւէրներուն մասին, որոնք այսօր ծառայած են քրիստոնէայ համայնքներուն առջեւ՝ Մերձաւոր Արեւելքի մէջ ընթացող պատերազմներուն, կրօնական ծայրայեղութիւններուն, միջհամայնքային անվտանգութիւններուն, ցեղասպանութեան, ընկերային-տնտեսական անկման եւ բնակչութեան գաղթին եւ տեղաշարժներուն համատեքստին վրայ:

Իբրեւ ընկերաբան Հրաչ Զիլինկիրեան վերջին տարիներու իր ուսումնասիրութիւններուն մէջ եւ հանրային ելոյթներուն ընթացքին ուշադրութիւն հրաւիրած է Մերձաւոր Արեւելքի մէջ քրիստոնէայ համայնքներուն եւ փոքրամասնութիւններու իրազրութեան վրայ, մանաւանդ գիտական եւ քաղաքական որոշումներ կայացնողներու շրջանակներէն ներս: Որպէս մտաւորական իր ուսումնասիրութիւններուն, միտքերուն եւ ծրագրերներուն նպատակն է, մանաւանդ Սփիւռքի համար, ազգային ինքնութիւնը, մշակոյթը եւ լեզուն դարձնել առօրեայ ապրուած իրականութիւն:

Հրաչ Զիլինկիրեան հանդիպումներ եւ ելոյթներ ունեցաւ նաեւ Արցախի մէջ, ուրկէ վերադարձին Երեւանի մէջ պատասխանեց ԺԱՄԱՆԱԿ-ի հարցումներուն: Այսօր Միջին Արեւելքը, ուր տեղի ունեցող խնդիրներուն մասին խօսեցաք, աշխարհի թէ՛ կ'տը կը սեպտեմբ, որուն վրայ կը «բաբախի» աշխարհի սիրտը:

«Այո, եւ այդ տարածքաշրջանին առնչուող իմ ուսումնասիրութիւններու հիմնական կեդրոնը քրիստոնէայ համայնքներն ու ոչ-խալամ փոքրամասնութիւններն են: Եւ եթէ աչք մը նետենք այս վերջին տարիներուն տեղի ունեցող պատերազմներուն, իրադարձութիւններուն, լուրջ խնդիրներ դրուած են քրիստոնէայ համայնքներուն առջեւ: Գաղտնիք է, որ քրիստոնէայ համայնքները կը նօսրանան ընդ-

հանրապէս Մերձաւոր Արեւելքի մէջ: Անշուշտ, ես այն կարծիքին չեմ, որ լրիւ պիտի վերանան այդ համայնքները:

-Բայց յաճախ լուրեր կը տարածուին, որ յատուկ նպատակ մը կայ Մերձաւոր Արեւելքի մէջ քրիստոնէութիւնը բնաջնջելու, այդ մասին ի՞նչ կ'ըսէք:

-Ես չէի ըսեր՝ յատուկ քաղաքականութիւն է: Անշուշտ, իսլամական ծայրայեղութիւնը իր գաղափարախօսութեան մէջ ունի Միջին Արեւելքը մաքրել ոչ-խալամական տարրերէ, այդ իմաստով իրենց գաղափարախօսական կամ «աստուածաբանական» բացատրութեան մէջ այդ մէկը կայ: Բայց չեմ կարծեր, որ այդպէս ծրագրուած բան մըն է, եւ պետութիւններ նստած եւ ծրագրած են քրիստոնէութիւնը ի սպառ վերացնել: Անշուշտ, վտանգը եղած է եւ տակաւին կայ:

Այսօր երկու հիմնական խնդիր կայ Մերձաւոր Արեւելքի քրիստոնէութեան առջեւ: Առաջինը՝ ապահովութեան եւ անվտանգութեան խնդիրն է: Եւ այստեղ, ըստ գոնէ իմ ուսումնասիրութիւններուս, անապահովութեան հիմնական երեք մակարդակներ կան. մէկը՝ ֆիզիքական ապահովութեան, անվտանգութեան խնդիրն է: Մարդիկ գոյութեան խնդիր ունին այնտեղ՝ ռուսներու, կրակոցներու տակ անոնք պէտք է իրենց կեանքը ապահովեն կամ փրկեն:

Անապահովութեան երկրորդ մակարդակին վրայ կայ ընկերային-տնտեսական ապահովութեան խնդիրը: Այսինքն այս պատերազմները, բախտները վերջին վեց-եօթ տարիներու ընթացքին այնպիսի իրավիճակ մը ստեղծած են, որ տնտեսութիւնները՝ մանաւանդ Սուրիոյ եւ Իրաքի մէջ լրիւ անկումի մէջ են, մարդիկ աշխատանք չունին, գործատեղիներ կորսուած են, եկամտաւոր աղբիւրները չքացած են եւ այլն, եւ այլն:

Իսկ երրորդը, որ քիչ մը աւելի երկարաժամկէտ ապահովութեան խնդիր է, այն ալ՝ մշակոյթի եւ կրօնի անվտանգութեան խնդիրն է: Այսինքն այդ տարածքաշրջանին մէջ, մանաւանդ իսլամական ծայրայեղութեան պարունակին մէջ նաեւ լուրջ խնդիր է կրօնական ազատութեան հարցը, եւ փոքրամասնութիւնները, մանաւանդ քրիստոնէաները իրենց հաւատքը, կրօնքն ու մշակոյթը պահպանելու եւ ազատօրէն գործածելու անմիջական հարց ունին: Ապահովական այս հարցերն են, որ այսօր կը դիմագրաւէ Մերձաւոր Արեւելքի

քրիստոնէայ բնակչութիւնը:

Միւս՝ երկրորդ խնդիրը, որ կը բխի այս անվտանգութեան հարցէն, գաղթականութիւնն է, տեղաշարժներն ու տեղափոխութիւնները: Վերջին տասը տարիներու ընթացքին հսկայական արտագաղթ եղած է եւ տակաւին կը շարունակուի: Օրինակ, Իրաքի մէջ մէկ միլիոնէ աւելի քրիստոնէաներ արդէն երկիրը լքած են: Պատերազմէն առաջ Իրաքի մէջ կար մօտ մէկ միլիոն երեք հարիւր հազար քրիստոնէայ, այսօր հազիւ երկու-երեք հարիւր հազար մնացած է ամբողջ Իրաքի մէջ: Թիւերու առումով նոյն նուազումն է նաեւ ուրիշ երկիրներու մէջ:

-Իսկ տարածքաշրջանին մէջ հայութեան տեղաշարժներուն եւ գաղթին մասին ի՞նչ տուեալներ կան:

-Ես փոքրիկ ուսումնասիրութիւն մը ըրած եմ, եւ եթէ բաղդատենք անցնող քառասուն տարիներու հետ թիւերը, կը տեսնենք, որ հայ համայնքները Մերձաւոր Արեւելքի մէջ, վաթսունհինգ տոկոսէ աւելի նուազած են: Այսօր Մերձաւոր Արեւելքի մօտ տասը երկրի մէջ, ուր մեծ թիւով հայ համայնքներ կային, հազիւ մնացած է մօտ երկու հարիւր յիսուն հազար հայութիւն, ներառեալ Իրանը, Լիբանանը, Սուրիան, Իրաքը, Եգիպտոսը, նաեւ՝ Թուրքիան, եթէ Միջին Արեւելքը նկատի առնենք քիչ մը լայն իմաստով: Երեւակայեցէք, եթէ անասունականներուն, որ հայութեան

թիւնը վեց հարիւր յիսուն-եօթհարիւր հազար էր, հիմա մօտ երկու հարիւր յիսուն հազար է միայն:

-Այս տեղաշարժներու շնորհիւ այդ մարդոցմէ շատ քիչերուն հայեացքը կ'ուղղուի դէպի հայրենիք, այլ երկիրներ կ'երթան անոնք, այդ ալ ուրիշ մտահոգիչ հարց մըն է, քանի որ Յայաստանը այսօր ունի ժողովրդագրական խնդիր, եւ լաւ կ'ըլլար, որ անոնք Յայաստան գալին, որպէսզի այդ հարցն ալ ձեւով մը լուծուէր:

-Այս մէկը լուրջ հարց է: Անշուշտ, ցանկալի է, որ մանաւանդ Միջին Արեւելքէն մարդիկ Հայաստան գան, որովհետեւ նախ մշակոյթի, միջավայրի եւ այլ նմանութիւններ գոյութիւն ունին, նոյնիսկ աշխարհագրական մօտիկութիւնը կրնայ դեր խաղալ: Բայց քանի որ, ռեւէ գաղթական նախ իր ամէնօրեայ մտահոգութիւնները ունի, իր ու ընտանիքին ամէնօրեայ պէտքերը հայթայթելու անմիջական հարցն ունի, ուրեմն, տեղ մը պիտի երթայ, ուր ինք կրնայ գանոնք ապահովել, պահել իր գաւակներն ու ընտանիքը: Հայաստանը այսօր, այո, մենք կը ներկայացնենք որպէս մեր ինքնութեան կարեւոր մէկ մասը, կ'առաջարկենք մարդոց, որ գան Հայաստան, ձեւով մը փորձելով անոնց հայրենասիրական զգացումներուն դիմել, բայց միւս կողմէ եթէ անոր առընթեր

Շար.ը էջ 18

JENNY'S IMMIGRATION & SOCIAL SERVICES


Հաստատութեան տնօրէն եւ հայ համայնքին տարիներ շարունակ օգնութիւն ցուցաբերած փորձառու ճենի Աբրահամեանը շարունակում է օգտակար լինել մեր հայրենակիցներին կառավարութեան կողմից գաղթականութեան փաստաթղթերի, հիւանդութեան, թոշակների եւ պետական օգնութեան ձեւակերպման անհրաժեշտ ծառայութիւններով:

Քաղաքացիութեան Կեդրոն
 1436 W. Glenoaks Blvd., Glendale, CA 91201
 Tel: (818) 242-8196 Fax: (818) 937-9120

-Քոլոր ճանապարհներով Green Card եւ այլ գաղթականական ծառայութիւններ

-Եթէ երբեւէ ունեցել էք խնդիրներ, որը կարող է ձեզ խանգարել քաղաքացիութեան հարցով, մի մտահոգուէք, մենք ձեզ կ'օգնենք ...

Passport and Immigration Photos




Jenny Abrahamian
 Թարգմանութիւններ՝ Հայերէն, Անգլերէն, Արաբերէն, Ռուսերէն, Պարսկերէն եւ այլն
 -Լիազօրագրեր/ Appostille

Ծառայութիւններ

-Հէշտ եւ կարճ ճանապարհով հիւանդութեան թոշակ SSI-SSA
 -Medi-Cal
 -CAPI, Sponsor-ով կամ առանց Sponsor-ի

LIVE SCANS



Fingerprinting

Նոտար/Notary

Վստահեցէք մեր տարիներու փորձառութեան եւ արդար աշխատանքին

Ձեր գաղթականական եւ այլ հարցերու շուրջ ամէն հարցումի պատասխանը մեր մօտ կը գտնուի (Section 8, խնամակալ, եւ այլն)

ԿԱՐԵՒՈՐ ԱՏԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ

Շարունակուած էջ 13-էն

այդ մարդուն, այդ հայուն որ գաղթական է, ամենահասարակ պայմանները չենք կրնար ապահովել, ուրեմն այդ մարդը թերեւս իր հոգիով, սրտով կ'ուզէ Հայաստան գալ, բայց հնարաւորութիւնները այստեղ բաւարար չեն, ըսենք՝ տուն վարձելու դրամ չունի, իր ասպարէզին մէջ աշխատանք գտնելու հնարաւորութիւն չունի եւ այլն, ուրեմն Հայաստան պիտի գայ, ինչ պիտի ընէ: Եթէ գայ, թերեւս ինքզինքը նոյն վիճակին մէջ կը պատկերացնէ, ինչպէս որ էր իր երկրին մէջ, ուրկէ նաեւ այս հարցերուն պատճառով գաղթած է: Այս հարցը շատ աւելի բարդ է, քան մենք մեր ազգային քննարկումներուն մէջ կը պատկերացնենք: Ինչպէս ըսի՝ զգացումներով կը խօսինք այս հարցին մասին, բայց միայն զգացական բաւարար չէ: Այդ հայերը կ'երթան Քանաւոս կամ ուրիշ երկրներ, որովհետեւ հոն որոշ նախնական պայմաններ եւ որոշ պատրաստ գետին կան, եւ երբ անմիջապէս հասնին, քիչ մը իրենք գիրենք կը գտնեն եւ կամաց-կամաց կը սկսին իրենց կեանքը վերականգնել: Հիմա, Հայաստանի մէջ այլ խնդիր մը կայ, որուն մասին ես քանիցս անդրադարձած եմ: Հայաստանի մէջ նոյնքան կարիքաւոր մարդիկ կան, գաղթականներու նման անոնք պատշաճ տուն չունին, աշխատանք չունին, մեծ ընտանիք ունին, որուն ամէնօրեայ հոգերը չեն կրնար հոգալ, առողջական խնդիրներ ունին... Պաշտօնական տուեալներով՝ Հայաստանի մէջ ինն հարիւր հազար աղքատ կայ, այս մէկը պաշտօնական տուեալն է, թերեւս աւելի է թիւը: Ուրեմն, ձեռով մը կանգնած ենք խաչմերուկի մը առջեւ. եթէ Միջին Արեւելքէն եկած գաղթականներուն պիտի օգնենք, ժողովուրդը կ'ըսէ՝ մենք ալ հոս նոյն խնդիրները ունինք, ինչո՞ւ մեզի չէք օգնել...

-Ինչպէ՞ս կը պատկերացնէք այս հարցերուն լուծումը:

-Այսօր մենք աշխարհի մը մէջ կ'ապրինք, ուր պէտք է բազմակողմանի աշխատանք տանինք, բազում ուղղութիւններով մտածենք: Այնպէս չէ, որ Հայաստանի բոլոր խնդիրները պէտք է լուծենք, յետոյ սկսինք Միջին Արեւելքի կամ հայ գաղթականներու մասին մտածել: Ուրեմն, գուրահետ, նոյնիսկ՝ բազմակողմանի նայելով է, որ այս բոլոր հարցերուն լուծում պէտք է տրուի:

-Իսկ գալով Մերձաւոր Արեւելքի տեղաշարժներուն, ինչպէ՞ս կը պատկերացնէք ապագան, ինչպէ՞ս կը դիտարկէք այդ անորոշութիւնը, մանաւանդ որոշ գերտերութիւններու ղեկավարներ փոխուած են, եւ կը թուի, թէ որոշակի բան մը պիտի ըլլայ:

-Նախ ըսեմ, որ Միջին Արեւելքի քրիստոնէութիւնը ընդհանրապէս արեւմտեան երկրներէն օրակարգին մէջ ալ չի յիշուիր: Այսպէս ըսենք՝ արեւմտեան պետական կամ հասարակութիւններու տեսադաշտին մէջ չեն անոնք: Երբ Միջին Արեւելք կ'ըսեն՝ մարդիկ անմիջապէս կը մտածեն անաբեկչութեան մասին, իՇԻՊ-ի մասին, բայց ոչ ոք կը մտածէ, որ Միջին Արեւելքը քրիստոնէութեան օրրան է, այնտեղ ծնած է քրիստոնէութիւնը, եւ այնտեղ է, որ հին արմատներ ունի եւ այդ արմատները այսօր մերթ ընդ մերթ կը

տկարանան:

Ինչ կը վերաբերի ապագային, անորոշ է, բայց ես այն կարծիքին չեմ, որ քրիստոնէութենէն լրիւ պիտի պարպուին այդ երկրները: Յատակ է, որ եկող տասնամեակներուն թուային իմաստով շատ աւելի փոքր համայնքներ պիտի ըլլան այնտեղ: Յատկապէս մեր պարագային՝ հաւանաբար հայկական համայնքները շատ աւելի փոքր պիտի ըլլան:

Գաղթականութիւնը իր զգալի հետեւանքները պիտի ձգէ այնտեղի համայնքներուն վրայ, որովհետեւ գաղթողները ձեռով մը միջին խաւի անդամներն են՝ բժիշկներ, ուսուցիչներ, արհեստագործներ եւ այլք, այն խաւը, որ հիմնականօրէն կը պահէր մեր համայնքային կառուցները՝ դպրոց, կոնսեր, եկեղեցի եւ այլն: Ուրեմն, երբ այդ խաւը կամաց-կամաց կը նստրանայ, կը նշանակէ, որ մենք ունինք ուղեղներու արտահոսք, եւ անոր հետեւանքով՝ նիւթական աղբիւրներու նուազում, քանի որ այդ արհեստավարժ մարդիկը հոն չեն, որպէսզի աշխատին եւ պահեն մեր համայնքային կառուցները: Ուրեմն, այս բոլորին իբրեւ հետեւանք, կրնանք ըսել, որ մեր ազգային, համայնքային կառուցները հետզհետէ պիտի տկարանան, եւ արդէն որոշ չափով տկարացած են: Այսինքն, կը նշանակէ, որ փոխանակ քսան դպրոց ունենալու, թերեւս պէտք է մտածենք զանոնք միացնել հինգ, վեց դպրոցներու մէջ:

-Իսկ մարդու՞, որ տարբեր երկիրներ կ'երթայ, իր դրական ազդեցութիւնը կ'ունենա՞յ այդ երկիրներուն մէջ, մանաւանդ, որ մենք այդ երկիրներու հայութեան մասին գիտնք, որ աշխատող են, շէնցող են, ուր որ երթան, ինքզինքնին կը փաստեն եւ այդպէս եղած է դարերու ընթացքին:

-Հետաքրքրական հարցում մըն է, որուն կրնանք թէ՛ դրական, թէ՛ ժխտական ձեռով նայիլ: Պատմութեան ընթացքին ալ, երբ Հայաստանը տկար եղած է եւ անկումի մէջ գտնուած է, ուրիշ գաղութներ սփռուքի մէջ ծաղկած են: Օրինակ, Անիի կործանումէն յետոյ, Եգիպտոսի մէջ ձեւաւորուած է ծաղկուն հայկական համայնք մը: Ուրեմն երբ գաղութէ մը արտագաղթ կայ, ո՛ւր որ ուղղուի արտագաղթի հոսքը, այնտեղ կը շարունակուի կամ կը վերականգնի համայնքային կեանքը: Այսօր վստահ Գանատայի մէջ սփռուած հայերը ձեռով մը նոր շունչ տարած են հայ համայնքին, օրինակ, հայկական դպրոցներուն մէջ կրնան Հայկական գացած ուսուցիչներ աշխատիլ եւ այլն: Ատիկա դրական բան մըն է, իսկ երկրորդ խնդիրը այն է, որ եթէ սփռուք երեւոյթի տեսանկիւնէն նայինք, Լիբանան, Սուրիա կամ Մոնթրէալ, նորէն սփռուքի մասին է խօսքը: Այսինքն աշխարհագրական տարբերութիւնը կայ, բայց բովանդակութեան, իրականութեան առումով կը մնայ սփռուքեան իրականութիւն: Անշուշտ, այնտեղ կան նրբութիւններ. Միջին Արեւելքի մէջ հայերը լաւապէս պահպանած են լեզուն եւ մշակոյթը, այն ալ, որովհետեւ կ'ապրին իբրեւ քրիստոնէայ փոքրամասնութիւն՝ իսլամ երկրներու մէջ: Իսկ Արեւմուտքի մէջ տարբեր է, բայց սփռուքը սփռուք է:

Ուրիշ հարց մըն ալ, որուն մասին վերջերս սկսայ մտածել.

հիմա կայ սփռուքին սփռուքը՝ Հայաստանի մէջ: Այսինքն, սփռուքահայեր, որոնք եկած են Հայաստան եւ երկար տարիներ հոս կ'ապրին, ձեռով մը «սփռուք» մըն են՝ Հայաստանի մէջ, որովհետեւ անոնք ընդհանրապէս Հայաստանի հասարակութեան կողմէ կը դիտուին որպէս սփռուքահայեր, ոչ թէ իբր համաքաղաքացիներ, եւ անոնք կրկին կը մնան սփռուք, այս անգամ՝ հայրենիքի մէջ: Եւ ունինք նաեւ միւս երեւոյթը՝ Հայաստանի սփռուքը՝ սփռուքի մէջ: Այս հարցերը ուսումնասիրութեան նիւթեր են, որոնք կրնան տոթթորականի լաւ նիւթ դառնալ:

-Վերադառնալով Մերձաւոր Արեւելքին՝ տարածքաշրջանը խաղաղութիւն պէս գաղթողները ետ կը դառնա՞ն:

-Միշտ պատերազմէն փախչող մարդը պարտադրուած կը փախչի, այն միտքով, որ քանի մը տարի երթալ, այդ ամէն ինչը անցնի, նորէն ետ դառնայ: Նման պարագաներուն միշտ այդպէս է՝ ժամանակաւոր կ'երթանք, բայց այդ ժամանակաւորը կը դառնայ մշտական: Ծատ քիչ անգամներ եղած են ետ դարձողներ, օրինակ՝ Լիբանանի պատերազմէն երբ մարդիկ էմիրութիւններ կամ Միացեալ Նահանգներ գաղթած են, այսօր երեսուն տարիէ ի վեր անոնք հոն են, օր մը թերեւս վերադառնան, բայց այդ ժամանակաւորը յաճախ տասն-

եակ տարիներ կ'երկարի, երախաները կը մեծնան, կեանքը կը փոխուի եւ վերադարձը կը դժուարանայ: Կեանքն է նաեւ, որ մեզ կը ձեւաւորէ:

-Ի՞նչն է պատճառը, որ հայեր, այս կամ այն երկրին մէջ ապրելով եւ Դայաստանը այնքան ալ գրաւիչ ապրելու միջավայր չեն կատարելով, իրենց միտքին մէկ անկիւնը անպայման ունի Դայաստանը: Արդեօք հայրենիքի ո՞ւր է այդ մէկը, թէ՞ ուրիշ պատճառ մը եւս կայ:

-Անշուշտ, հայրենիքի ուժն ալ կայ: Իբրեւ ընկերաբան իմ մօտեցումս այն է, որ երբ դու երկրի մասին կ'ըսես, միշտ այդ երկրի հասարակութիւնը պայման չէ, որ քեզ ընդունի իբրեւ իր մէկ մասնիկը, դու միշտ դրսեցի ես, միշտ օտար ես, կրնաս այդ երկրին անձնագիրը ունենալ, բայց խօսքիդ մէջ օտար չեշտ մը կայ, մորթիդ գոյնը քիչ մը թուի է, եւ այն: Եւ որովհետեւ այդ «օտարութիւնը» կայ, դու կը զգաս, որ քու արմատը Հայաստանն է, հայրենիքն է: Սփռուքը իր զգացումով իր հաւաքական երեւակայութեան մէջ հայրենիքի գաղափարը պահէր է, իբրեւ իր գոյութեան աղբիւրը ստեղծելով իր երեւակայական հայրենիքը: Անշուշտ, Հայաստանին հակելու, պատճառներէն են նաեւ մշակոյթն ու լեզուն, եւ Հայաստանը ի վերջոյ այդ բոլորին աղբիւրն է, որ մեզի եկած է դարերէ ի վեր:

ԵՐԵՔ ԱՊՐՈՒԱԾ ԻՐԱԴԱՐՁՈՒԹԻՒՆՆԵՐ

Շարունակուած էջ 15-էն

«Կոչել իր անունով»՝ Յեղասպանութիւն:

«Խոստումը», հայր Ալպագին եւ Միացեալ Նահանգներու փոխնախագահը: Երեք իրադարձութիւններ, զորս ապրեցայ մէկ ամսուան ընթացքին: Երեք իրադարձ-

ւած թիւներ, որոնք իրարու առնչուած են եւ կու գային դարձեալ չի չեցնելու, իմա՝ արթնցնելու, թէ հայուն աղէտը պէտք է կոչել իր անունով՝ Յեղասպանութիւն, իսկ հայր միշտ պիտի շարունակէ չի չել եւ պահանջել գայն՝ Յեղասպանութիւն եզրին ճշգրիտ ու լիբրալ օգտագործումը:

ԼՈՍ ԱՆՃԵԼՍԻ ՀԱՅ ՔՈՅՐԵՐՈՒ ՎԱՐԺԱՐԱՆ

Շարունակուած էջ 16-էն

վարժարանիս երաժշտութեան ուսուցչուհի Վարդուհի Պաղտասարեան: Յայտագիրը ճոխացաւ Դալար Մարգարեանի դաշնամուրի մատուցումով ապա չորս աշակերտուհիներ Մելօտի Սերայտարեան, Դալար Մարգարեան, Նարէ Թերզեան եւ Մէրի Զաքքօ իրենց ուսուցիչ կարէն Սանթրիկեանի հետ ներկայացուցին «House Of the Rising Sun» երգը կիթարի եւ դաշնամուրի նուագակցութեամբ:

Նախագահական մրցանակներ ստացողներուն կողմէ խօսք առաւ Ալեք Մարգարեան իսկ աշակերտական խորհուրդի ատենապետուհին՝ Դալար Մարգարեան ներկայացուց խորհուրդին տարեկան տեղեկագիրը: Հանդիսութեան աւարտին շրջանաւարտները իրենց վկայականները եւ նուէրները ստանձնելէ ետք Տիկին Արմինէ Շէրիկեան յայտարարեց 2017 տարուան աւարտական դասարանը՝ Հայ Քոյրերու Վարժարանի 2017ի Շրջանաւարտներ, ներկաներու ուրախութեան արտայայտութիւններու միջոցով մէջ, աշակերտները մէկ կողմ նետելով իրենց գլխարկները հեռացան սրահէն..... Երգելով «Վերջին Զանգը» եւ հնչեցնելով վերջին անգամ դպրոցի զանգը:

Այսպիսով Հայ Քոյրերու Վարժարանը պատրաստուած հունձք մը եւս յանձնեց իրենց ծնողներուն եւ քալիֆորնիոյ Հայ գաղութին, որոնք եկան աւելնալու վարժարանի շրջանաւարտներու հոյլին:

Անոնք իրենց գլխարկները մէկ կողմ թողած պիտի ուղղուին դէպի աղբիւրը լոյսի:

Կը շնորհաւորենք եւ կը գնահատենք բոլոր ծնողները, որոնք իրենց ջանքերով եւ զօհողութիւններով իրականութիւն դարձուցին իրենց հոգեհատորներու հայկական միջնակարգ վարժարանէ վկայելու առիթը, նաեւ ուսուցիչներուն, որոնք համագործակցաբար ծնողներուն անգամ մը եւս կրցան պատրաստուած խումբ մը հայորդիներու սլացք տալ դէպի տարբեր երկրորդական վարժարաններ:

Երեկոն շարունակուեցաւ շքեղօրէն զարդարուած «Րէնէսանս» ճաշարահանսէն ներս մինչեւ ուշ ժամեր, ուր անոնք հատեցին իրենց 11 տարիներու աշխատանքը ներկայացնող կարկանդակը եւ ապրեցան արդարօրէն իրենց իրաւունքը եղող յաջողութեան երջանկութիւնը:

Կը շնորհաւորենք բոլոր շրջանաւարտները, կը մաղթենք բարի երթ ու նորանոր նուաճումներ յառաջիկայ ուսումնական տարիներու ընթացքին: